ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհրդի 26.12.2024թ. նիստի

ք.Երևան 26.12.2024թ.

Նիստին մասնակցում էին Դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը (նիստի նախագահ), դիտորդ խորհրդի անդամներ Վարազդատ Ասատրյանը, Խաչատուր Ղահրամանյանը, Վահրամ Ապրեսյանը, Գարիկ Մկրտչյանը, Լևոն Պետրոսյանը, Խաչիկ Նազարյանը և տնօրեն Անդրանիկ Ելինյանը (նիստի քարտուղար):

Արձանագրվեց, որ քվորումն ապահովված է, և դիտորդ խորհրդը իրավազոր է անցնել օրակարգում ընդգրկված հարցերի քննարկմանը:

Օրակարգում ընդգրկված հարցեր՝

1. Խորհրդի անդամների միջև կազմակերպությանն առնչվող հարցերի հետ կապված գործառույթների բաշխում,
2. «ՍԳԿԿ» ԻԿ ֆինանսական վիճակի հետ կապված հարցեր,
3. Կառավարիչների կյանքի ապահովագրության հետ կապված հարցեր:

1. Դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը հայտնեց, որ անհրաժեշտ է ներդնել դիտորդ խորհրդի և կազմակերպության անդամների միջև արդյունավետ հաղորդակցման մեխանիզմ, և ապահովել կազմակերպությանն առնչվող հարցերի բաշխումը խորհրդի անդամների միջև: Այդ նպատակով անհրաժեշտ է կատարել գործառույթների բաշխում խորհրդի տարբեր անդամների միջև:

Հարցի վերաբերյալ արտահայտվեցին բոլոր ներկաները:

«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության **Դիտորդ խորհուրդը որոշեց**

Բացել էլեկտրոնային փոստի հասցե և դրա մասին տեղեկացնել բոլոր կառավարիչներին՝ իրենց հուզող հարցերն ու առաջարկները այդ հարթակի միջոցով խորհրդին ուղարկելու հնարավորության մասին: Կարևոր հարցերը ներկայացնել խորհրդի անդամների քննարկմանը, իսկ աշխատանքների բաշխման հարցին անդրադառնալ այդ կերպ վեց ամիս աշխատելուց հետո՝ 2025թ. հուլիսին:

Գրավոր տեղեկացնել Հյուսիսային ստորաբաժանման գործավարի հաստիքը զբաղեցնող աշխատակցին, 01.01.2025թ.-ից նրա աշխատավարձը սահմանել նվազագույն աշխատավարձի չափով, իսկ 31.03.2025թ.-ից հաստիքը կրճատել, և 31.03.2025թ.-ից լուծել Հյուսիսային ստորաբաժանման գրասենյակի վարձակալության պայմանագիրը:

Կողմ – 7, Դեմ – 0, Ձեռնպահ – 0:

2. Տնօրեն Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց «ՍԳԿԿ» ԻԿ-ի ֆինանսական վիճակը:

Դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը հայտնեց, որ իր կարծիքով «ՍԳԿԿ» ԻԿ-ն գտնվում է ֆինանսապես ոչ կայուն վիճակում, քանի որ ֆինանսական մուտքերը բավարար չեն կազմակերպության կանոնադրական նպատակներին հասնելու, մասնավորապես՝ կառավարիչների համար արդյունավետ դասընթացներ կազմակերպելու, կառավարիչների գործունեության արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ նախաձեռնելու համար: Կազմակերպության անդամավճարների չափը սահմանվել է առանց ֆինանսական հաշվարկներ կատարելու և կազմակերպության կարիքները հաշվի առնելու: Արձանագրեց, որ կազմակերպությունն այլ աղբյուրներից եկամուտ չունի, եկամտի աղբյուրը անդամավճարներն ու ավանդ դրված գումարներից ստացվող տոկոսներն են: Առաջարկեց մինչև կազմակերպության ֆինանսական վիճակի կայունանալուն ուղղված գործուն մեխանիզմների ներդրումը, օպտիմալացնել կազմակերպության ծախսերը:

Ելույթ ունեցավ Խաչիկ Նազարյանը և առաջարկեց, որ «ՍԳԿԿ» ԻԿ-ին վարձակալությամբ տրված ք.Վանաձոր, Վարդանանց 17 հասցեում գտնվող գրասենյակային տարածքի հետ կնքված վարձակալության պայմանագիրը լուծել, ինչպես նաև կրճատել Հյուսիսային ստորաբաժանման գործավարի հաստիքը:

Հարցի վերաբերյալ արտահայտվեցին բոլոր ներկաները:

«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության **Դիտորդ խորհուրդը որոշեց**

Գրավոր տեղեկացնել Հյուսիսային ստորաբաժանման գործավարի հաստիքը զբաղեցնող աշխատակցին, 01.01.2025թ.-ից նրա աշխատավարձը սահմանել նվազագույն աշխատավարձի չափով, իսկ 31.03.2025թ.-ից հաստիքը կրճատել, և 31.03.2025թ.-ից լուծել Հյուսիսային ստորաբաժանման գրասենյակի վարձակալության պայմանագիրը:

Կողմ – 7, Դեմ – 0, Ձեռնպահ – 0:

3. Դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը առաջարկեց փակել «ՍԳԿԿ» ԻԿ-ի երկու բանկային հաշիվներից մեկը, և ազատ դրամական միջոցներից 30 մլն դրամը նույնպես ձևակերպել որպես ավանդ՝ տոկոսներ ստանալու նպատակով:

Հարցի վերաբերյալ արտահայտվեցին բոլոր ներկաները:

«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության **Դիտորդ խորհուրդը որոշեց**

Գրավոր տեղեկացնել Հյուսիսային ստորաբաժանման գործավարի հաստիքը զբաղեցնող աշխատակցին, 01.01.2025թ.-ից նրա աշխատավարձը սահմանել նվազագույն աշխատավարձի չափով, իսկ 31.03.2025թ.-ից հաստիքը կրճատել, և 31.03.2025թ.-ից լուծել Հյուսիսային ստորաբաժանման գրասենյակի վարձակալության պայմանագիրը:

Կողմ – 7, Դեմ – 0, Ձեռնպահ – 0:

4. Դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը հայտնեց, որ ուսումնասիրել է կյանքի ապահովագրության հետ կապված հարցերը, և պարզել է, որ որքան շատ է պայմանագիր կնքելու ցանկություն հայտնողների քանակը, այնքան ավելի ցածր արժեքով է հնարավոր կնքել կյանքի ապահովագրության պայմանագրեր: Հայտնեց, որ պայմաններն էլ ավելի բարենպաստ են դառնում, եթե դիմողը կազմակերպություն կամ կոլեկտիվ է: Հավելեց, որ այդ հարցով քննարկում է ունեցել կառավարիչ, ապահովագրական ոլորտում մասնագիտացված Արտակ Մարտիրոսյանի հետ, խնդրել է ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն՝ այդ հարցում կողմնորոշվելու համար: Առաջարկներն ստանալուց հետո հարցը կներկայացվի քննարկման:

Տիգրան Սահակյան
Վարազդատ Ասատրյան
Խաչատուր Ղահրամանյան
Վահրամ Ապրեսյան
Գարիկ Մկրտչյան
Լևոն Պետրոսյան
Խաչիկ Նազարյան